Հաշվետվություն

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կողմից 2026 թվականի առաջին եռամսյակում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակազմի փաստաթղթաշրջանառության բաժնում իրականացվել է ընդամենը 16934 փաստաթղթաշրջանառություն, որից՝ 3218 մտից, 2016 ելից, 3622 ներքին:

2026 թվականի առաջին եռամսյակում ստացվել է 137 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 86 քաղաքացի: 86 քաղաքացու դիմումներին պատասխանվել է:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 8 քաղաքացի, բոլոր 8 դիմումներին պատասխանվել է:

գ/ Առողջապահական բնույթի 16 դիմում է ստացվել, ստացված 16 դիմումներն էլ բավարարվել են:

դ/ Աշխատանքի հարցերով դիմել է 9 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է 6 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական պատասխան:

զ/ Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 1 քաղաքացի և ստացել է դրական պատասխան:

է/ Հողաշինության հարցերով դիմումներ չեն ներկայացվել:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 3 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Ստացվել է այլ բնույթի 8 դիմում: